

« 16 » ապրիլ 2026թ. No 2120 - Ա

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԻԺՖԱՐՄ ԲԸ, 603105, ք. ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈՂ, ՍԱԼԳԱՆՍԿԱՅԱ Փ., 7, ՄԱՍՆԱՇԵՆՔ 1- ՈՐԱԿԻ ԵՎ ԲԱՑ ԹՈՂՆՄԱՆ ՀՍԿՈՂ, ՆԻԺՖԱՐՄ ԲԸ, 603105, ք. ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈՂ, ՍԱԼԳԱՆՍԿԱՅԱ Փ., 7, ՌՈՒՍԱՍՏԱՆ- ԲԱԼՔ ԱՐՏԱԴՐՈՂ, ՓԱԹԵԹԱՎՈՐՈՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ՆԻԺՖԱՐՄ ԲԸ, 603105, ք. ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈՂ, ՍԱԼԳԱՆՍԿԱՅԱ Փ., 7, ՌՈՒՍԱՍՏԱՆ «ՎԻՏԱՊՐՈՍՏ ՖՈՐՏԵ ՇԱԳԱՆԱԿԱԳԵՂՁԻ ՀԱՆՈՒԿ ՄՈՄԻԿՆԵՐ ՈՒՂԻՂԱՂԻՔԱՅԻՆ 20ՄԳ; (10/2X5/)» ԴԵՂԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի՝ դեղի գրանցումը, գրանցումը մերժելը, կասեցնելը և ուժը կորցրած ճանաչելը փորձագիտական եզրակացության հիման վրա իրականացնում է Առողջապահության հարցերով լիազորված պետական կառավարման մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի՝ հետգրանցումային փոփոխությունների իրականացումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված փորձագիտական կազմակերպության կողմից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 18-ի N 1122-Ն որոշման 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրված Ռուսաստանի Նիժնարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7, Ռուսաստան մասնաշենք 1- որակի և բաց թողնման

հսկող, Նիժնի Նովգորոդ, Սալզանսկայա փ., 7, Ռուսաստան-բալք արտադրող, փաթեթավորող արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Նիժնի Նովգորոդ, Սալզանսկայա փ., 7 «Վիտապրոստ Ֆորտե շագանակագեղձի հանուկ մոմիկներ ուղիղաղիքային 20մգ; (10/2x5/))» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ ՊՊ-Ն-000284-ԴՊ-ԱՄ առ 13.02.2026թ. բացասական եզրակացության համաձայն հայտը մերժվում է հիմք ընդունելով ռեֆերենտ երկրի կողմից տրված բացասական եզրակացությունը (իրավական հիմք՝ 16.12.2020 N25-6-4345481/ИЗМ/Р/О):

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 2 հավելվածի 58-րդ կետի՝ դեղի հետգրանցումային փոփոխություններն մերժելու վերաբերյալ հրամանն ընդունվում է փորձագիտական եզրակացությունը ստանալու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետը, N 2 հավելվածի 57 և 58-րդ կետերը, ինչպես նաև իրավական և վերոգրյալ փաստական հիմքերից ելնելով՝

#### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Ռուսաստանի Նիժնի Նովգորոդ, Սալզանսկայա փ., 7, մասնաշենք 1- որակի և բաց թողնման հսկող, Նիժնի Նովգորոդ, Սալզանսկայա փ., 7, Ռուսաստան-բալք արտադրող, փաթեթավորող արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Նիժնի Նովգորոդ, Սալզանսկայա փ., 7, Ռուսաստան «Վիտապրոստ Ֆորտե շագանակագեղձի հանուկ մոմիկներ ուղիղաղիքային 20մգ; (10/2x5/))» դեղի հետգրանցումային փոփոխությունների գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ սույն հրամանը երկու աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից: